ԱԳՐՈ Լրատու

ԱՊՐԻԼ 15 - 26 2017 Թ. ԹԻՎ 9 (2130)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 102

Դեպի հիշողության ցավը

Նայում ես շուրջդ՝ փթթող բնությանը, ծաղկող ծառերին ու հետզհետե արևով լցվող օրվան, և ցանկանում շրջապատիդ հետ կիսել գարնան հրճվանքը, երազանքների ու հույսերի արարումը... Սակայն ապրիլը դեռևս հայի համար մնում է ցավի հիշողության ամիս: Չեն ջնջվում պատմության մեջ դրոշմված արյունագիր, մահագիր փաստերը: Անհնարին է փակել աչքերը և մտքի աչքերով տեսնել միայն այն, ինչ ուզում ես. առաջ գնալու հրամայականը ստիպում է թարթել, քանի որ դա է հայացքը պարզ ու մաքուր պահելու միակ ձևը...

1915 և հաջորդ տարիների իրադարձությունները միանշանակ որակվում են որպես ցեղասպանություն: Այն ցեղասպանություն էր, քանի որ պետական մակարդակով, ծրագրված էր մի ամբողջ ազգի՝ հայ ժողովրդի բնաջնջում, ֆիզիկական ոչնչացում... Այն XX դարի առաջին ցեղասպանությունն էր, աննախադեպ իրադարձություն, որը տեղի ունեցավ հայերի հետ: Այս անհերքելի փաստը համառորեն չի ընդունում Թուրքիայի կառավարությունը: Վերջինին հետևելով՝ իրականության դեմ իրենց աչքերը փակ են պահում աշխարհի շատ պետությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅԺ

Հանրապետության Նախագահը ծանոթացել է «Սպայկա» ընկերության ընթացիկ գործունեությանն ու զարգացման ծրագրերին

Հանրապետության Նախագահը, գյուղատնտեսության, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարների, Արարատի մարզպետի ուղեկցությամբ, այցելել է «Գրինհաուզ» ընկերություն, ծանոթացել ընկերության զարգացման և ներդրումային ծրագրերի շնորհիվ արձանագրված հաջողություններին՝ ինտենսիվ այգիների ընդլայնման և ջերմոցաշինության ոլորտում իրականացված ներդրումներին, ընկերության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծված ենթակառուցվածքներին, կատարված ներդրումների արդյունքում ստեղծված աշխատատեղերին և 2017 թվականի գործունեության ուղղություններին: Ջերմոցային տնտեսությունում շրջայցից հետո, Նախագահը «Գրինհաուզի» վարչական շենքում ծանոթացել է ընկերության ղեկավարության ներկայացրած տարեկան հաշվետվությանը և առաջիկա ծրագրերին:

Նախագահն այցելել է նաև տարածաշրջանի առաջատար ագրոհոլդինգի՝ «Սպայկա» ընկերության Երևանում գտնվող գլխամաս: Սերժ Սարգսյանը եղել է «Վոլվո» ընկերության բեռնատարների տեխսպասարկման նորագույն սարքավորումներով հագեցած կենտրոնում և «Սպայկա»-ի հյութերի ու պահածոների արտադրության գործարանում՝ ծանոթացել ընկերության ձեռքբերումներին, այդ թվում՝ արտահանման ծավալներին ու զարգացման ծրագրերին: Ընկերության պատասխանատուները ներկայացրել են, որ 2016 թ. դրությամբ «Սպայկա»-ի ուղղակի ներդրումները կազմել են 86 մլն ԱՄՆ դոլար, ընկերությունն ունեցել է 926 մշտական աշխատատեղ, իսկ 2017 թ. տարեվերջին ներդրումների ընդհանուր չափը կկազմի 154 մլն ԱՄՆ դոլար, մշտական աշխատատեղերի քանակը կհասցվի 1316-ի: «Սպայկա» ընկերության պատասխանատուների հավաստմամբ, 2017 թվականին ընկերությունը զարգացնում է կաթի արտադրության և վերամշակման ուղղությունը՝ շարունակելով ներդրումները ինտենսիվ այգիների ու ջերմոցաշինության ոլորտում: «Սպայկա»-ի ծրագրերից է նաև հայկական ապրանքների օնլայն խանութի՝ «Արմզոն» ծրագրի իրականացմամբ, այնպիսի հարթակի կազմակերպումը, որը հնարավորություն կտա Հայաստանի բոլոր արտադրողներին՝ առանց միջնորդների ու սուպերմարկետների, անմիջականորեն մուտք ունենալ ՌԴ հիմնական քաղաքներ՝ կարճ ժամկետում և մատչելի գներով ռուսաստանյան սպառողին հասցնելով վերոնշյալ օնլայն հարթակում նրա ընտրած հայկական ապրանքատեսակները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարությունը հավանություն է տվել Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսության վնասների կանխարգելման հայեցակարգին, որի հիմնական նպատակը՝ բնակլիմայական աղետներից գյուղատնտեսության դիմակայունության մակարդակի բարձրացման, ոլորտի ռիսկերի մեղմման ու հասցվող վնասների կանխարգելման բնագավառում քաղաքականության հիմնական ուղղությունների կանխորոշումն է:

Հիմնավորման համաձայն, ՀՀ-ում բնական տարբեր աղետներից՝ գարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից տարեկան վնասվում են 30-35 հազ. հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածքներ, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների հետագա արտադրական գործունեության ու սոցիալական վիճակի վրա:

Բնակլիմայական աղետների վնասների կանխարգելման ներկա վիճակի վերլուծությունը վկայում է, որ այս բնագավառում հրատապ անհրաժեշտություն է պետական քաղաքականության հստակեցումը և վերջինիս հիման վրա, համապատասխան միջոցառումների իրականացումը: Փաստաթղթով ներկայացվում են բնակլիմայական աղետներից վնասների կանխարգելման հիմնական ուղղությունները, դրանց իրականացման մոտեցումները, հայեցակարգի իրականացման ռիսկերը, դրանց մեղմման հնարավորություններն ու ակնկալվող արդյունքները:

Կարեն Կարապետյանը կարևորել է հայեցակարգով նախատեսվող քայլերը և նշել. «Շատ լավ բան եք նախատեսել: Այս միջոցառումների մեջ ներառված է ապահովագրումը, ոռոգման համակարգի բարելավումը, կարկտապաշտպան միջոցների՝ ցանցերի հարցը, հողատեսքերի հակահեղեղային պաշտպանությունը, սերմնաբուծությունը: Վստահ եմ՝ խելացի համակարգ է, և ոլորտում շատ բարելավելու բան ունենք: Ձեզնից ակնկալում ենք որակապես փոխել այդ համակարգը: Նրա մուլտիէֆեկտը լինելու է անկանխատեսելի»:

* * *

Կառավարությունը սահմանել է գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգը, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով՝ ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարությամբ, կարևորվել է կոոպերացիայի զարգացումը:

***

Կառավարության որոշմամբ, ծրագրի շրջանակում, «Արարատի գինու գործարան», երեք տարով հետաձգվել է ՍՊԸ կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների հաշվարկած ԱԱՀ գումարների վճարման ժամկետը:

Ընկերությունը նախատեսում է ձեռք բերել խմիչքների արտադրության և շշալցման հոսքագծեր, որով էլ ավելի կբարձրացնի արտադրության որակը և կավելացնի արտադրանքի ծավալները:

Վերազինման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվում է կատարել շուրջ 3,1 մլրդ ՀՀ դրամի ներդրում: Արդյունքում՝ կստեղծվի մոտ 23 աշխատատեղ՝ 2017 թ. 162, 2018 թ. 185, 2019 թ.՝ 195 հազար ՀՀ դրամ միջին աշխատավարձով:

Կոոպերացիա Էջ 4

Գործարար կանայք Էջ 5

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Իրանցի գործարարներն առաջարկել են Հայաստանում հիմնել տոմատի մածուկի արտադրություն

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է ջերմոցաշինությամբ և տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող իրանական մի շարք խոշոր ընկերությունների ղեկավարների:

Համառոտ ներկայացնելով իրենց գործունեությունը՝ հյուրերը նշել են, որ մեծապես հետաքրքրված են գյուղատնտեսության ոլորտում հայկական կողմի հետ տարբեր ուղղություններով համագործակցություն ծավալելու հարցում: Մասնավորապես իրանցի գործարարները ցանկություն են հայտնել Հայաստանում հիմնել լոլիկի վերամշակման գործարան՝ արտադրանքը Եվրասիական տնտեսական միության երկրներ արտահանելու նպատակով: Գործարարները հավելել են, որ այս հարցում ակնկալում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությունը: Նրանք նաև նշել են, որ նախատեսում են հայ ֆերմերների հետ պայմանագրեր կնքել՝ լոլիկի արտադրության կազմակերպման համար:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել իրանական կողմին Հայաստանում լոլիկի մշակություն և մածուկի արտադրություն կազմակերպելու հարցում: Տեղական սորտերի սերմերի վերաբերյալ առավել հանգամանալից տեղեկատվության ստանալու համար, նախարարն առաջարկել է հյուրերին սերտորեն համագործակցել «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԳԼ ենթակայության ներքո գործող մյուս գիտական կենտրոնների հետ:

Գործարարների հետ փոխգործակցությունը գործնական հիմքերի վրա դնելու նպատակով, նախարար Իգնատի Առաքելյանն առաջարկել է ներկայացնել բիզնես-ծրագիր, որում կներառվեն բոլոր առաջարկները և միջոցառումները: Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև Հայաստանում ջերմոցային կոնստրուկցիաների արտադրության և ներդրման, համատեղ ջանքերով գյուղատնտեսական այլ մթերքների արտադրության կազմակերպման հնարավորությունը:

Քննարկվել է գյուղատնտեսական սուբսիդավորվող վարկերի ծրագրի վերանայման հարցը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանին՝ սուբսիդավորվող վարկերի ծրագիրը վերանայելու և նոր պայմանները քննարկելու նպատակով:

«Գյուղացին պետք է ունենա հնարավորություն ստանալ մատչելի վարկ՝ իր տնտեսությունը կազմակերպելու համար, սակայն ծրագրի այսօրվա տարբերակն արդյունավետ չի գործում, չի ծառայում իր նպատակին և չի նպաստում գյուղատնտեսության զարգացմանը: Մենք առաջարկում ենք մշակել նոր ծրագիր, որով կխթանենք փոքր ու միջին գյուղացիական տնտեսությունների խոշորացումը և կնպաստենք արդյունաբերական գյուղատնտեսության ստեղծմանը», - նշել է նախարար Իգնատի Առաքելյանը:

Նախարարն առաջարկել է փոխել չափորոշիչները և վերանայել վարկերի տրամադրման պայմանները: Մասնավորապես նախատեսվում է ուսումնասիրել սուբսիդավորման ավելացման հնարավորությունը, ինչի արդյունքում էլ ավելի կնվազի վարկային տոկոսադրույքը, նաև բարձրացնել տրամադրվող գումարի շեմը: Բացի այդ, տնտեսությունները պետք է ներկայացնեն բիզնես ծրագիր, որպեսզի պետության կողմից սուբսիդավորվող գումարներն առավել արդյունավետ և նպատակային ծախսվեն և ուղղվեն բացառապես ոլորտի զարգացմանը:

Նախարարն առաջարկել է, որպեսզի ծրագիրը գնահատվի բանկի մասնագետների կողմից, որից հետո կորոշվի շահառուին ֆինանսական կամ նյութական աջակցության տրամադրման հարցը: Միաժամանակ կարևորվել է, անհրաժեշտության դեպքում, ֆերմերներին խորհրդատվություն տրամադրելու հարցը:

Նշենք, որ այս տարի շարունակվում է 8 % տոկոսադրույքով սուբսիդավորվող վարկերի տրամադրումը, որի շրջանակում արդեն իսկ տրամադրվել է 700 մլն դրամի չափով գումար:

Վերազինել և արդիականացնել գյուղատնտեսական տեխնիկայի պարկը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է ՀՀ-ում Բելառուսի արտակարգ և լիազոր դեսպան Իգոր Նազարուկին՝ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության շրջանակների ընդլայնման հնարավորությունը քննարկելու նպատակով:

Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ մեկնարկել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիրը, որի նպատակն է՝ վերազինել և արդիականացնել գյուղատնտեսական տեխնիկայի պարկը: «Այս ծրագրով մենք ստեղծել ենք մեխանիզմ, որով ֆերմերն ինքը կարող է որոշել, թե ինչ գյուղտեխնիկա է նրան հարկավոր գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Շուկան ազատ է, սահմանափակումներ չկան, և եթե Բելառուսում գտնվեն գյուղտեխնիկա արտադրողներ և մատակարարներ, որոնք հետաքրքրված են հայկական շուկայով, ապա կարող են ևս մասնակից դառնալ ծրագրին»,- նշել է նախարար Իգնատի Առաքելյանը:

Դեսպան Իգոր Նազարուկն իր հերթին նախարարին է ներկայացրել Բելառուսում գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման պայմանները, պետության կողմից արտադրողներին և մատակարարներին տրամադրվող աջակցության գործիքները: Քննարկվել են այս ուղղությամբ հայկական և բելառուսական պետական, մասնավոր և ֆինանսական կառույցների ներգրավմամբ փոխգործակցության հնարավոր ուղիները:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև անտառային տնտեսությունների արդյունավետ կառավարմանն առնչվող հարցեր: Մասնավորապես դիտարկել երկու երկրների միջև առկա փոխգործակցության սերտացման հնարավորությունը: Առաջարկվել է նաև ուսումնասիրել հետագայում անտառանյութի վերամշակման գործարանի հիմնման հնարավորությունը:

Բելառուսի դեսպանը նշել է, որ իրենք հետաքրքրված են բելառուսական պարարտանյութը Հայաստանում իրացնելու հնարավորությամբ: Զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել Բելառուսի ագրարային բուհերում հայ մասնագետների ուսուցման և վերապատրաստման հարցին:

Տեղեկացնելով, որ հունիսի 6-10-ը Մինսկում կազմակերպվելու է ամենամյա «Բելագրո» մասնագիտացված միջազգային ցուցահանդեսը՝ Բելառուսի դեսպան Իգոր Նազարուկն առաջարկել է հայկական կողմին ևս մասնակցել այդ միջոցառմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Հիմնադրամի գործունեության քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի է ունեցել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի խորհրդի հերթական նիստը, որը վարում էր հիմնադրամի խորհրդի նախագահ, ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը:

Օրակարգի առաջին հարցով՝ խորհուրդը լսել և հաստատել է հիմնադրամի 2016 թվականի գործունեության հաշվետվությունը: Հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Ջիլավյանը զեկուցել է հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների մասին և ներկայացրել ծախսերը: Մասնավորապես նշվել է, որ պատրաստվել է հայկական գինու վերաբերյալ հեռուստահաղորդումների շարք, կազմակերպվել է ֆրանսիացի մասնագետների այց Վայոց ձորի մարզ, որոնք խորհրդատվություն են տրամադրել տեղի ֆերմերներին, լեհ և ռուս բլոգերների այցելություն Հայաստան, որոնք սոցցանցերի միջոցով տարածել են հայկական գինու վերաբերյալ տեղեկություններ: Իր խոսքում նախարար Իգնատի Առաքելյանը հորդորել է՝ ակտիվացնել հիմնադրամի պաշտոնական www.vwfa.am կայքի աշխատանքները և առանձնահատուկ ուշադրություն դարձնել հիմնադրամի գործունեության լուսաբանման հարցին:

Օրակարգի հաջորդ հարցով՝ խորհուրդը քննարկել է հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնում Զարուհի Մուրադյանին նշանակելու հարցը և միաձայն հաստատել նրա թեկնածությունը: Նիստի ընթացքում քննարկվել են նաև օրակարգային մի շարք այլ հարցեր:

ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ագրոբիզնեսի ոլորտում ներգրավված կանանց համար

Օրերս Կանաչ ուսուցման կենտրոնում անցկացվեց հերթական ուսուցում, որին մասնակցեցին 15 գյուղական կանանց խմբերի ներկայացուցիչներ՝ ՀՀ բոլոր մարզերից, ովքեր ընդգրկված են «Գյուղական Կանանց Խմբերի տնտեսական հզորացում կարողությունների զարգացման միջոցով» ծրագրում: Ուսուցման նպատակն էր՝ նպաստել կանանց կառավարչական և մարքեթինգային հմտությունների զարգացմանը, որը նրանց կօգնի հետագայում կայացնելու գրագետ և համապատասխան որոշումներ:

Ներկայացումները, ինքնուրույն աշխատանքներն ու վարժությունները կազմում էին ուսուցման անբաժանելի մասը, որոնք օգնեցին մասնակիցներին՝ առավել լավ հասկանալ մատուցվող նյութը և գնահատել իրենց ուժեղ և թույլ կողմերը:

Մասնակիցներին տրվեցին նաև վկայականներ: Ագրոբիզնեսի ոլորտում ներգրավված և դեռևս առաջին քայլերն անող կանանց խմբերին ներկայացվեց կառավարչական որոշումների կայացման՝ ինքնարժեքի հաշվարկի, ֆինանսավորման ձևերի, ռիսկերի, հետգնման ժամանակահատվածի և շահութաբերության մակարդակի, շուկայահանման և հետբերքահավաքի կարևորությունը փոքր գյուղացիական տնտեսությունների դեպքում: Մանրամասն ներկայացվեցին նաև հետևյալ թեմաները՝ կառավարման հիմնական միջոցները, գործառույթները, տնտեսությունների նպատակների և առաքելության մշակումը, մարքեթինգ և վաճառք թեմաները՝ թիրախային շուկայի ընտրություն, ուսումնասիրություն, ապրանք, գնագոյացում, խթանում, դիստրիբուցիա:

«Գյուղական Կանանց Խմբերի տնտեսական հզորացում, կարողությունների զարգացման միջոցով» ծրագիրն իրականացվում է «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության ՀԿ-ի կողմից ՄԱԿ-ի Կանանց հարցերով զբաղվող գրասենյակի Գենդերային հավասարության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

«Կանաչ արահետ»

ԱԳՐՈ Լրատու
Ապրիլ 15-26, 2017 թ.
Թիվ 9 (2130)

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ Է ՄՇԱԿՈՒՄ

«Լուկաշինի գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը 2009 թ.-ից զբաղվում է օրգանական գյուղմթերքների արտադրությամբ: Ավելի քան 18 հա տարածք զբաղեցնող այգիներում աճեցնում են օրգանական դեղձ, ծիրան, սալոր և այլ մրգատեսակներ: Արտադրում են նաև բանջարեղեն: Իսկ 2016 թ.-ից զբաղվում են նաև օրգանական մրգերի և բանջարեղենի վերամշակումով, արտադրում են բարձրորակ չիր, որի պահանջարկը մեծ է արտերկրում:

Կոոպերատիվի անդամները, օրգանական գյուղմթերքների արտադրության գծով մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու նպատակով, բազմիցս մասնակցել են ուսուցողական սեմինարների թե՛ հանրապետությունում, և թե՛ արտերկրում: «Հեյֆեր-Հայաստան» միջազգային կազմակերպության աջակցությամբ, կոոպերատիվի 4 անդամներ, արտերկրի փորձի ուսումնասիրման նպատակով, եղել են Լեհաստանում: Այցելել են օրգանական գյուղմթերքներ արտադրող մի շարք ֆերմերային տնտեսություններ, ինչպես նաև՝ վերամշակող ընկերություններ: Իսկ կոոպերատիվի նախագահ Վարդգես Դավթյանն այդ ուղղությամբ մասնակցել է գիտաժողովների՝ Չեխոսլովակիայում և Գերմանիայում, եղել է նաև ֆերմերային տնտեսություններում:

Սկսած 2016 թ.-ից՝ կոոպերատիվն արտադրում է օրգանական չրեր: Նախորդ տարի պատրաստել են սալորի չիր: «Միակ խնդիրն օրգանական հումքի պակասն է, անհրաժեշտ քանակությամբ արտադրանք ստանալու նպատակով, ստիպված այն մթերել ենք նաև այլ արտադրողներից»,- նշում է կոոպերատիվի նախագահը: Ի դեպ, արտադրանքը սերտիֆիկացված է, և մեծ քանակությամբ արտադրելու դեպքում, այն հնարավոր է նաև արտահանել: Իսկ «Օրգանական պտուղ-բանջարեղենի վերամշակում և այգիների հիմնում» ծրագիրը, որը ներկայացրել են «Ավստրիական զարգացման գործակալությանը», արժանացել է վերջինիս հավանությանը, որի իրականացման համար տրամադրվելու է դրամաշնորհ: Ծրագրի իրականացման աշխատանքները կսկսվեն ընթացիկ տարում: Վ. Դավթյանի տեղեկացմամբ, ծրագրի շրջանակներում կոոպերատիվը ձեռք է բերելու սառնարան, չորացման սարքավորում, աշխատանքային սեղաններ և լվացարաններ: Կազմակերպվելու են նաև ուսուցումներ՝ օրգանական գյուղմթերքների արտադրության և վերամշակման ուղղությամբ:

Տարեսկզբին մասնակցել են Գերմանիայում կայացած «Biofar» միջազգային ցուցահանդեսին, որտեղ ծանոթացել են օրգանական միրգ և բանջարեղեն արտադրող, ինչպես նաև՝ փաթեթավորումն իրականացնող ընկերությունների ներկայացուցիչների հետ: Կապեր են հաստատել գերմանական ընկերություններից մեկի հետ՝ չրերի պահանջվող քանակության առկայության դեպքում արտահանում կազմակերպելու նպատակով: Գերմանական կողմին հատկապես հետաքրքրել են հայկական ծիրանի, դեղձի, և սալորի չրատեսակները, որոնց որակական հատկանիշները և փաթեթավորումը պետք է համապատասխանեցվեն միջազգային չափորոշիչներին: Սպառողական կոոպերատիվը 2006 թ.-ին արտահանել է 120 տոննա ծիրան, 40 տոննա սալոր: Օրգանական չրերի արտադրությանը զուգընթաց՝ պատրաստում են նաև ավանդական չրատեսակներ, որոնք հիմնականում արտահանում են ՌԴ:

Կոոպերատիվը, որը ձևավորվել է 2005 թ.-ին՝ «Ամքոր» միջազգային կազմակերպության աջակցությամբ, ունի 134 անդամ (հիմնադրվել է 42 անդամով): Ի դեպ, կոոպերատիվին անդամակցում են նաև հարևան Խանջյան և Նորավան համայնքների բնակիչները: 2016 թ.-ին՝ «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի», համայնքապետարանի և կոոպերատիվի տրամադրած միջոցներով մասնակիորեն վերանորոգվել է համայնքի մանկապարտեզը: Հիմնադրամի ծրագրի շրջանակներում, դարձյալ կոոպերատիվի աջակցությամբ, վերանորոգվել է նաև գյուղի բուժկետը: Միակ հիմնախնդիրը, ըստ Վ.Դավթյանի, ոռոգման ջրի սակավությունն է, ինչի հետևանքով ջրի նկատմամբ մեծ պահանջարկ ունեցող շատ մշակաբույսեր չեն մշակվում:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում բացվել է «Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոն»: Այն հիմնվել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF) և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի համագործակցությամբ, ՀՀ բնապահպանության նախարարության անմիջական մասնակցությամբ և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի շրջանակներում:

Կենտրոնի բացմանը ներկա էին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, Գերմանիայի փոխդեսպան Նադիա Լիխտենբերգերը, Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, WWF-Հայաստանյան գրասենյակի տնօրեն Կարեն Մանվելյանը, CARD հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարդարյանը, ֆերմերներ, համայնքապետեր, ՁԼՄ-ների ներկայացուցիչներ և այլ հյուրեր: Կենտրոնը կնպաստի մարզում անասնապահության ոլորտի զարգացմանը: Այն հագեցած է արհեստական սերմնավորման և անասնաբուժական ժամանակակից սարքավորումներով և գործիքներով, համագործակցելու է շրջակա համայնքների անասնաբույժների հետ, տրամադրելու է խորհրդատվություն, ինչի շնորհիվ բարելավվելու են արոտավայրերը և բնական ռեսուրսները: «Բնական ռեսուրսների կառավարումը և արդյունավետ օգտագործումը, առաջին հերթին, պահանջում և պարտադրում է մեզանից յուրաքանչյուրին՝ խնամքով մոտենալ բնական ռեսուրսներին, այդ թվում՝ հողատարածքներին: Ուստի առաջին թիրախային հատվածը գյուղատնտեսությունն է, որը տնտեսական զարգացման և առաջընթացի առումով, կարող է էական դերակատարություն ունենալ: Որքանով մենք կկարողանանք ճիշտ և նպատակային օգտագործել հողային ռեսուրսները, այդ թվում նաև արոտավայրերը՝ դրանց ճշգրիտ կառավարման սխեմաների միջոցով, այդքանով մենք կնպաստենք նաև արդյունավետ գյուղատնտեսության վարմանը, անասնապահության զարգացմանը և մեր բնական ռեսուրսները կօգտագործենք առավել արդյունավետ և նպատակային»,- բացման խոսքում ասել է ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը:

«Այս ծրագրի նպատակներից մեկն էլ այն է, որ համայնքներում գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչներն ավելի մեծ ընկալելիություն կունենան բնապահպանական խնդիրների նկատմամբ՝ հատկապես այստեղ գործող բնապահպանական միջանցքի առկայության պարագայում: Կարծում եմ, որ այսօր ևս Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի բացումը մի գործունեություն է, որը մեզ ճիշտ ուղղությամբ է տանում, և հուսով եմ, որ այն կնպաստի ինչպես բնապահպանական գիտակցության բարձրացմանը, այնպես էլ՝ հնարավորություն կստեղծի, որպեսզի գյուղաբնակներն էլ ավելի բարելավեն իրենց շահույթ ստանալու հնարավորությունները»,- նշել է փոխդեսպան Նադիա Լիխտենբերգերը: «Նոր կենտրոնը գյուղացիական տնտեսություններին տրամադրելու է ծառայությունների ամբողջական փաթեթներ, կապեր է ստեղծելու գյուղատնտեսների և միջազգային ընկերությունների միջև, որոնք տրամադրելու են սարքավորումներ, տեղեկատվություն՝ անասնապահության, արոտավայրերի կառավարման և զարգացման նոր տեխնոլոգիաների վերաբերյալ: Այն էական դեր է խաղալու շուկայական կապերի հաստատման գործում, ինչպես նաև հասանելի է դարձնելու ֆինանսական ռեսուրսները տեղի ֆերմերների և ՓՄՁ-ների համար: Կենտրոնը համագործակցելու է շրջակա համայնքների անասնաբույժների և արհեստական սերմնավորող տեխնիկների հետ»,- ողջույնի խոսքում ասել է CARD հիմնադրամի տնօրեն Գ. Սարդարյանը: Եղեգնաձորի կենտրոնը նախատեսված է՝ որպես տարածքային կառույց, քանի որ այն ծառայելու է շրջակա 44 համայնքներին՝ ներառելով շուրջ 10 000 գյուղացիական տնտեսություն:

Նույն օրը տեղի է ունեցել WWF-Հայաստանի, «Գնիշիկ միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ» և Խաչիկ համայնքի միջև կնքվող «Բնության պահպանության եռակողմ պայմանագրի» ստորագրման արարողությունը, որի շրջանակներում համայնքին հանձնվել է գյուղտեխնիկա: WWF-Հայաստանի կողմից համայնքին հանձնվել են նաև մոտ 4000 պտղատու տնկիներ՝ այլընտրանքային եկամտի աղբյուր ստեղծելու նպատակով: «Չի կարելի անջատել բնապահպանությունը գյուղատնտեսության ոլորտից, քանի որ առկա է փոխադարձ կապը: Այս ծրագիրը մենք իրականացնում ենք միջպետական համաձայնագրի հիման վրա, ՀՀ կառավարության և Գերմանիայի կառավարության համագործակցության շրջանակներում:

Ծրագրի հիմնական նպատակն է, որ Խոսրովի արգելոցից մինչև Զանգեզուրի արգելավայրն ընկած տարածքները լինեն ավելի կայուն, պահպանվի կենդանական աշխարհը: Գյուղատնտեսական տեխնիկան, որը տրամադրեցինք Խաչիկ համայնքին, նույնպես պետք է ծառայի արոտավայրերի ճիշտ կառավարմանը», - նշել է WWF-Հայաստանյան գրասենյակի տնօրեն Կ. Մանվելյանը: Ի դեպ, գյուղում կիիմնվի գյուղտեխնիկայի հավաքակայան, որն առաջիկայում ևս կհամալրվի նոր տեխնիկայով: Ցուցաբերված աջակցության համար գոհունակության և երախտիքի խոսքեր ասացին մարզպետ Հարություն Սարգսյանը և Խաչիկի համայնքապետ Վարդան Ներսիսյանը: «Բնապահպանական պայմանագիրը» կարևոր է նրանով, որ նպատակ ունի նպաստել կենսաբազմազանության պահպանությանն ու համայնքների կայուն զարգացմանը: Սա էական բաղադրիչ է հարավային Հայաստանում էկոմիջանցքների ստեղծման գործընթացներում, որն իրականացվում է «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծմանն աջակցություն» տարածաշրջանային ծրագրով և Գերմանիայի կառավարության ֆինանսավորմամբ: Պայմանագրի շնորհիվ 70 000 եվրո է տրամադրվել Խաչիկ համայնքին՝ գյուղտեխնիկա ձեռք բերելու համար: Այն կնպաստի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև մշակվող հողատարածքների քանակի ավելացմանը, վերջինս էլ կնպաստի տնտեսությունների բարեկեցության ավելացմանը, նաև Խաչիկ համայնքի զարգացմանը:

WWF-Հայաստանը համայնքների աջակցման գործունեությունը սկսել է դեռևս 2008 թ.-ից՝ աննկատ չթողնելով նաև Վայոց ձորի մարզը: Տրամադրվել է գյուղտեխնիկա, համայնքի բնակիչներին հատկացվել են տնկիներ, կատարվել է հյուրատների վերանորոգում, իսկ Գետափ համայնքում կառուցվել է չրանոց: Եղեգնաձորում ստեղծվել է այցելուների կենտրոն, Գնիշիկ համայնքին տրամադրվել են նաև մեղվափեթակներ, իսկ Մոզրով համայնքում իրականացվել է խմելու ջրի մատակարարման ցանցի վերանորոգում:

Միջոցառման վերջում կայացավ համայնքի ավանդական ուտեստների հյուրասիրություն, գեղարվեստական կատարումներով հանդես եկան երգի և պարի համույթները:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՆ Է

«Արաքս-2» արտադրական կոոպերատիվը հիմնադրվել է 1990 թ.-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում: Սկզբնական շրջանում զբաղվել են հացաբուլկեղենի, խմորեղենի և այլ սննդատեսակների արտադրությամբ: Շուկայում հայտնի են «Էկոկաթ» ապրանքանիշով: Արտադրական կոոպերատիվը տարածաշրջանի տնտեսության, և մասնավորապես՝ գյուղատնտեսության, զարգացման գործընթացում այսօր արդեն ունի ռազմավարական դերակատարություն: «Ագրոլրատու»-ի հյուրն է կոոպերատիվի հիմնադիր նախագահ Արթուր Մովսիսյանը:

-Պրն. Մովսիսյան, ինչպե՞ս է ձևավորվել «Արաքս-2» -ը, ինչ կազմակերպություններ են աջակցել կոոպերատիվի կայացմանը:

-Աշխատանքային գործունեությունը սկսել ենք շատ նվազ տեխնիկական հագեցվածությամբ, սակայն շատ կարճ ժամանակահատվածում՝ 2007 թ.-ին, գործարանն ամբողջությամբ վերազինել ենք եվրոպական լավագույն սարքավորումներով: Սկզբնական շրջանում, կաթի հումք ունենալու նպատակով, զբաղվում էինք նաև անասնաբուծությամբ, բայց քանի որ մարզում զարգացած էր ճյուղը, որոշեցինք կաթի արտադրությունը թողնել ֆերմերներին, իսկ մենք կենտրոնացանք կաթի մթերման, վերամշակման և պանրատեսակների արտադրության վրա: Համայնքներում և հեռագնա արոտավայրերում ունենք մթերման կետեր, կաթի սառեցման ագրեգատներ: Սկզբնական շրջանում համագործակցել ենք ԱՄՆ գյուղդեպարտամենտի, այնուհետև՝ հոլանդական և կանադական ծրագրերի հետ: Վերջիններիս աջակցությամբ՝ ստացված դրամաշնորհները տրամադրել ենք նոր սարքավորումների ձեռքբերմանը, բարելավվել ենք կառավարման որակը, միաժամանակ իրականացրել ենք բազմաթիվ կրթական ծրագրեր: Սերտ համագործակցում ենք CARD հիմնադրամի հետ, որը մեզ աջակցում է սարքավորումների համալրման, նոր տեխնոլոգիաների ներդրման, ֆինանսական միջոցների տրամադրման և մասնագիտական այլ խնդիրների կարգավորման գործընթացներում: Մեր կազմակերպության կայացման և զարգացման գործընթացում շատ մեծ ներդրում ունի CARD-ը:

-Իսկ ինչ աշխատանքներ են տարվում, որպեսզի արտադրամաս մթերվի որակյալ, առողջ և անվտանգ կաթ:

Կաթն ընդունվում է ուղեկցող փաստաթղթերով: Մարզի անասնաբուժական ծառայությունը շատ լավ է աշխատում, կենդանիների բոլոր անհրաժեշտ պատվաստումները կատարվում են ժամանակին և, կաթի որակի ու անվտանգության հետ կապված, որևէ խնդիր չկա: Սակայն, այդքանով հանդերձ, մենք կաթը ջերմամշակում ենք: Աժեշղթայի զարգացման ծրագրի շրջանակներում, նախորդ տարի ձեռք ենք բերել կաթի ջերմամշակման ժամանակակից սարք, որի աշխատանքն ամբողջությամբ ավտոմատացված է: Մարզում արտադրվում է որակյալ կաթ, որի արդյունքում՝ ստացվում է բարձրորակ արտադրանք: Մարզը հարուստ է ալպիական և նախաալպիական արոտավայրերով: Որակյալ կաթի արտադրության կազմակերպման նպատակով, առաջին հերթին, փորձում ենք կրթել ֆերմերներին: Գործարանին կից գործում է ուսումնական կենտրոն, ի սկզբանե մենք շեշտը դրել ենք կրթական ծրագրերի իրականացման վրա: Այդ նպատակով մասնագետներ ենք հրավիրել տարբեր կազմակերպություններից և ուսումնական հաստատություններից, այդ թվում՝ CARD-ից և միջազգային այլ կազմակերպություններից, ինչպես նաև դասախոսներ ՀԱԱՀ –ից: Նրանք եղել են ֆերմերային տնտեսություններում կազմակերպել են շրջայցեր, բացատրական աշխատանքներ են տարել ֆերմերների շրջանում՝ որակյալ կաթի ստացման կարևոր նախապայմանների, հիգիենայի պահպանման կանոնների, կենդանիների խնամքի ճիշտ կազմակերպման, նույնիսկ մատղաշի աճեցման և մասնագիտական այլ հարցերի վերաբերյալ:

Կենդանիների մթերատվության բարձրացման և ցեղերի բարելավման նպատակով, տնտեսություններին ֆինանսական միջոցներ ենք տրամադրել՝ արհեստական սերմնավորման աշխատանքների կատարման համար: Որպես վերամշակող, ամեն կերպ աջակցել ենք, որպեսզի կայանան ֆերմերային տնտեսությունները: Մենք ֆերմերներին չենք տարանջատում գործարանի աշխատողներից, նրանք բոլորը մեկ ամբողջություն են: Այլ կերպ ասած, եթե չկա կաթ՝ չկա նաև գործարան:

-Իսկ ինչ քայլեր եք ձեռնարկում արտադրանքի որակի բարելավման ուղղությամբ: Ինչպե՞ս եք կազմակերպում իրացումը:

-Արտադրում ենք Լոռի, Զանգեզուր և այլ պանրատեսակներ, որոնք վաճառվում են Երևանի բարձրակարգ խանութներում: Բացի այդ, իրականացնում ենք նաև արտահանում ՌԴ, մասնավորապես՝ Մոսկվա: Մեր Լոռին Ռուսաստանում շատ պահանջված է, վերջինիս համը հաճելի է ռուսական սպառողի քիմքին, քանի որ

աղը պակասեցրել ենք և պատրաստման տեխնոլոգիան ավելի շատ մոտեցրել ենք եվրոպական Գաուդա պանրատեսակին՝ բարելավվելով տեխնոլոգիան: Մենք փորձում ենք նորագույն տեխնոլոգիաներ ներդնելով՝ արտադրել ավելի բարձրարժեք պանրատեսակներ՝ ինչպես ներքին, այնպես էլ՝ ԵՏՄ շուկաների համար, քանի որ հիմա ավելի են դյուրինացվել, պարզեցվել և կատարելագործվել արտահանման գործընթացները: Տնտեսական միասնական գոտու ստեղծման գործընթացը կարծես թե՝ կայանում է: Մենք նույնպես, ոչ միայն պետք է պահանջենք, այլև՝ նպաստենք վերջինիս կայացմանը:

-Ինչ խնդիրներ ունի արտադրական կոոպերատիվը:

-Խնդիրներ, իհարկե, միշտ էլ կան, սակայն արտադրողը պետք է լավատես լինի, որպեսզի հակված լինի նաև ներդրումներ կատարելու: Ես աշխատում եմ չնկատել թերությունները, քանի որ դրանք հիմնականում տեխնիկական լուծումներ պահանջող խնդիրների հետ են կապված և ժամանակի ընթացքում կարգավորվում են: Ես այն կարծիքին չեմ, որ ինչ-որ խնդիրներ կարող են խոչընդոտել աշխատանքին: Աշխատանքի կազմակերպումն ինքնին արդեն իսկ դժվարություն է, սակայն պետք է կարողանաս աշխատել: Իսկ եթե չես կարողանում՝ խնդիրները պետք է փնտրես քո մեջ: Աշխատելու համար մեր երկրում առկա են բոլոր պայմանները և, որ ամենակարևորն է՝ կա արտադրանքի սպառողը: Ամբողջությամբ պարզեցվել է հարկային դաշտը, կատարելագործվել ու բարելավվել է բանկերի գործունեությունը: Աշխատել է պետք:

-Որքա՞ն աշխատատեղեր է ստեղծում ձեր կոոպերատիվը:

-Կաթի առատության շրջանում աշխատատեղերի թիվը արտադրամասում հասնում է 40-ի: Մեզ հետ աշխատում են 500-560 փոքր ու միջին ֆերմերային տնտեսությունների ներկայացուցիչներ (տնտեսություններն ընդգրկում են մոտավորապես 20 կմ շառավիղ): Ի դեպ, աշխատում ենք նաև գյուղացիական փոքր տնտեսությունների հետ, որոնք թեև արտադրում են քիչ քանակությամբ կաթ, սակայն զարգացման շատ մեծ ներուժ ունեն: Ունենք երկու գործարան՝ Վարդենիսում և Ակունք գյուղում: Վարդենիսի գործարանը դեռևս կառուցման փուլում է, թեև մասնակիորեն սկսել է աշխատել: Մեր նպատակն է՝ ընդլայնել արտադրական հզորությունները: ՀՀ կառավարությանն ենք ներկայացրել ձեռնարկության արտադրական հզորության ընդլայնման վերաբերյալ մեր ծրագիրը, որը միտված է նաև տարածաշրջանի զարգացմանը: Մթերված կաթի դիմաց ֆերմերներին կանխիկ վճարելու, երբեմն նաև կանխավճարներ տրամադրելու համար բանկերից վերցնում ենք վարկեր՝ շրջանառու միջոցները համալրելու նպատակով: Փորձում ենք արդյունավետ ձևով կառավարել արտադրությունը, որպեսզի պահենք հավասարակշռությունը: Քայլեր ենք կատարում նաև սննդի որակի կառավարման բարելավման, սննդամթերքի անվտանգության չափորոշիչների պահպանման համակարգի ներդրման ուղղությամբ: Կառավարությունն ամեն կերպ փորձում է աջակցել մեզ, օժանդակել մեր ծրագրերի իրականացմանը: Մշտական աջակցություն ենք ստանում նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանից, մասնավորապես՝ մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանից: Մեր կազմակերպության երևանյան գրասենյակը գործում է արդեն 4-րդ տարին: Փորձի փոխանակման նպատակով, օգտվում ենք նաև արտաքին խորհրդատվությունից, այդ նպատակով համապատասխան մասնագետներ ենք հրավիրում արտերկրից:

-Կան ցուցանիշներ, օրինակ, կոոպերատիվի գործունեության արդյունքում, տարածաշրջանում արձանագրվել է անասնագլխաքանակի աճ:

-Այո, իհարկե, Գեղարքունիքի մարզն այսօր անասնապահության գծով առաջին տեղում է, ընդ որում՝ կաթի արտադրության ծավալներով նույնպես առաջինն է: Գյուղացիները սկսել են զարգացնել տնտեսությունները, 3-5 կով պահողներն արդեն գլխաքանակը հասցրել են 20 – 30-ի:

-Ո՞րն է Ձեր կազմակերպության գերխնդիրը:

-Մեր գործունեության հիմքում դրված է սահմանամերձ բնակավայրի բնակիչներին աշխատանքով ապահովելը, որպեսզի մնան տեղում, չգնան արտագնա աշխատանքի: Մեր առաջնահերթ խնդիրը՝ տարածաշրջանի տնտեսական զարգացումն է՝ ֆերմերին աջակցելու ճանապարհով, որպեսզի գյուղում ապրելն իմաստավորվի, կանխվի արտագաղթը, կրճատվի աղքատությունը, հզոր լինի սահմանը: Արտադրության մեջ շեշտը դնում ենք անարատ ավանդականի վրա: Այդ նպատակով արտադրության մեջ օգտագործում ենք անարատ կաթ: Որակյալ արտադրանքը ստացվում է որակյալ հումքի՝ բարձրորակ կաթի առկայության պարագայում: Բարձրորակ կաթի ստացմանը նպաստում են նաև տարածաշրջանի բնակլիմայական պայմանները, մաքուր օդը, ջուրը, մեր մրցակցային հիմնական առավելությունը հենց անարատ արտադրանքն է: Այլ կերպ ասած, «Էկոկաթ» ապրանքանիշը համապատասխանում է իր անվանմանը: Նոր գործարանի լիարժեք գործարկումից հետո կընդլայնենք նաև արտադրատեսականին, Վարդենիսի գործարանի արտադրական հզորությունները թույլ կտան օրական վերամշակել 40 տոննա կաթ (Ակունքում օրական վերամշակվում է շուրջ 15 տոննա կաթ): Վերջինիս գործարկումը տարածաշրջանում ավելի շատ սոցիալական ազդեցություն կունենա, կաշխատենք շուրջ 1500 ֆերմերի հետ: Այն հատվածում, որտեղ գտնվում են գործարանները, հարակից համայնքներում, որոնք զբաղվում են կաթի արտադրությամբ և առկա է մթերման հնարավորությունը, բնականաբար, արտագնա աշխատողների թիվը կտրուկ նվազել է:

-Պանրի արտադրությունում ունե՞ք մրցակիցներ, եթե գաղտնիք չէ, ապա ո՞ր ընկերություններին եք համարում մրցակից:

-Մրցակիցներ, իհարկե ունենք, ՀՀ Լոռու մարզի «Դուստր Մելանյա» և ՀՀ Շիրակի մարզի «Իգիթ» ընկերությունները: Ի դեպ, մենք արտահանում ենք նաև Վայոց ձորի մարզի Սալի գյուղի «Մելիմ» ընկերության այծի պանիրը, ՀՀ Սյունիքի մարզի «Բորիսովկա» և ՀՀ Արագածոտնի մարզի «Գոռ Սարգսյան» ընկերությունների պանիրները: Այդպիսով՝ աստիճանաբար ձևավորվում է «Հայկական պանիր արտադրողների և արտահանողների միությունը», որին կմիանան նաև այլ ընկերություններ: ՌԴ սպառողի համար հայկական պանիրը նույնանում է անարատի, որակյալի, բարձրարժեքի հետ՝ որպես բրենդ: Մեր նպատակն է, որպեսզի այդ բրենդը ճանաչելի դարձնենք աշխարհին:

Հարցազրույցը՝ Նելլի Սահակյանի

ԱԳԸՄ Լրատու
Ապրիլ 15-26, 2017 թ.
Թիվ 9 (2130)

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԸ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԵՎ ԱՅՍՕՐ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջին՝ Գավառագետի ստորին հոսանքի ավազանում: Գավառ քաղաքն ունի հարուստ պատմական կենսագրություն. այն հանդիսանում է հնագույն բնակավայր, որտեղ մարդը գործունեություն է ծավալել դեռևս միջին քարե դարից: Ուրարտական թագավորներ՝ Սարդուրի Երկրորդի և Ռուսա Առաջինի սեպագիր արձանագրություններում քաղաքի տարածաշրջանը կոչվել է Վելիքուխի երկիր: Ուրարտական Ռուսա Առաջին թագավորը մ. թ. ա. 728 թ. վերակառուցում է Բերդի գլուխ ամրոցը: Այն 400 մ երկարությամբ ձգվում է արևելքից արևմուտք, գրավում է 5 հա տարածություն, ունի 1.5 հա տարածքով ամուր միջնաբերդ, լայնակի պարիսպներով բաժանվում է երկու մասի, որոնք խոշոր քարերով շարված, սալածածկ գետնուղիներով կապված են եղել Գավառագետի հետ: Քաղաքի անվան առաջին վկայությունը մի խաչքար է, որը գտնվում է հին գերեզմանատան Սբ. Ստեփանոս մատուռի մոտ: Քաղաքն ամայացել է Շահ Աբաս 1-ինի կազմակերպած բռնագաղթի պատճառով և ամայի է մնացել մինչև 19-րդ դարը: 1828-1830 թթ Բայազետից ներգաղթել են 240 ընտանիքներ, որոնք էլ բնակավայրը կոչել են Նոր Բայազետ:

Քաղաքին Կամո (հեղափոխական Ս. Տեր-Պետրոսյանի անունով) անվանումը տրվել է 1959 թվականին: 1991 թ. սեպտեմբերի 21-ից անկախ Հայաստանի Հանրապետության քաղաք է՝ Գեղարքունիքի մարզային կենտրոնը: Կամոն Գավառ է վերանվանվել 1996 թ.-ին: Այսօր Գավառ քաղաքի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի հետ համատեղ, աշխատանքներ են իրականացնում՝ քաղաքն ավելի բարեկեցիկ դարձնելու, բնակչության հոգսը թեթևացնելու ուղղությամբ:

-Պարոն Մարտիրոսյան, քաղաքի բնակչությունն այսօր հիմնականում ինչո՞վ է զբաղվում:

- Գավառ քաղաքի բնակչության հիմնական զբաղմունքն անասապահությունն ու հողագործությունն է, սակայն, քիչ չեն նաև արտագնա աշխատանքի մեկնողները; Համայնքում կան նաև փոքր և միջին ձեռներեցությամբ զբաղվողներ: Վերջին 11 տարիների ընթացքում, համայնքում կատարվել են բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատանքներ:

-Ձեր ղեկավարած տարիներին ի՞նչ կարևոր աշխատանքներ են կատարվել համայնքում, որոնք թեթևացրել են բնակչության հոգսը:

- Այս ժամանակահատվածում հիմնանորոգվել են ճանապարհներ, կրթամշակութային հաստատություններ, լուսավորվել են փողոցներ, քաղաքի բոլոր բնակելի զանգվածներում կառուցվել են աստիճանահարթակներ, նորոգվել են նաև բազմաբնակարան շենքերի տանիքներ և տեղադրվել մուտքերի երկաթյա դռներ, վերանորոգվել հենապատեր, գազաֆիկացվել ու ջրագծեր են անցկացվել ծայրամասային թաղամասերում, ջրավազանների բարեկարգումներ են կատարվել: Արոտավայրերի վերին տարածքներում, պարբերաբար կատարվել են գետի հունի տարբեր հատվածների մաքրման աշխատանքներ, կառուցվել են մանկական խաղահրապարակներ: Այսօր արդեն ասֆալտապատ, բարեկարգ ու լուսավորված են քաղաքի բոլոր կենտրոնական փողոցները:

Գավառում իրականացվում է ամենօրյա աղբահեռացում, տեղադրված են աղբամաններ, պարբերաբար իրականացվում են բարեկարգման, կանաչապատման և ծառատնկման աշխատանքներ: Աշխատանքների կազմակերպման նպատակով, ձեռք է բերվել համապատասխան տեխնիկաներ: Չնայած պայմանների դժվարությանը՝ արդեն 3 անգամ՝ 2012, 2014 և 2016 թթ ՀՀ Տարածքային կառավարման և Համայնքների միության կողմից Գավառը ճանաչվել է որպես «Մաքուր քաղաք»: Ամենօրյա ուշադրության կենտրոնում են նաև քաղաքում գործող 5 մանկապարտեզները, որոնցում տարեցտարի բարելավվում են պայմանները:

-Բնակչության ազատ ժամանակն ինչպե՞ս է կազմակերպվում (կրթություն, մշակույթ, մարզական կյանք):

Գավառում այսօր գործում են կրթամշակութային հաստատություններ՝ արվեստի, երաժշտական և դուդուկի մասնագիտացված դպրոցներ, մշակույթի տուն, քաղաքային գրադարան, ուսուցողական և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, որոնց ակտիվ գործունեության շնորհիվ կազմակերպվում է համայնքի մշակութային առօրյան: Թվարկված հաստատություններում վերջին տարիներին կատարվել

են տարաբնույթ աշխատանքեր. հիմնանորոգում, գույքի ձեռքբերում և այլն:

Համայնքն ապրում է ակտիվ մշակութային կյանքով: Քաղաքում գործող կրթամշակութային հաստատություններն անմասն չեն մնում քաղաքային, մարզային, հանրապետական մրցույթ–փառատոների մասնակցությունից, միևնույն ժամանակ մշակութային տարաբնույթ միջոցառումներ են անցկացվում ինչպես նշյալ հաստատություններում, այնպես էլ մարզային և հանրապետական ենթակայության կրթամշակութային օջախներում: Հաճախակի բնույթ են կրում համաքաղաքային միջոցառումները, որտեղ իրենց մասնակցությունն են ունենում ինչպես Գավառ քաղաքի, այնպես էլ տարածաշրջանի բնակիչները: Այդպիսի միջոցառումներից էր բայազետցի բարերար Հայրապետ Խաչատրյանի (Կոլոտի) արձանի բացման արարողությունը, որը Գավառում իրականացվեց 2015 թվականի հոկտեմբերին՝ բարերարի մահվան 100-րդ տարելիցի կապակցությամբ: Գավառում գործում է նաև մարզադպրոց, որտեղ հաճախող երեխաներն արդեն մարզական հաջողություններ են գրանցել միջազգային մրցույթներում:

-Ինչպիսի՞ առաջնային խնդիրներ կան քաղաքում ծառացած, որոնք հրատապ լուծումներ են պահանջում:

-Գավառ քաղաքի համար շարունակում է խնդիր մնալ աշխատատեղերի բացակայությունը, ինչի լուծման ուղղությամբ էլ տարվում են հնարավոր աշխատանքներ. Նախատեսվում է, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում, քայլեր ձեռնարկել վերագործարկելու գուլպայի գործարանը, հիմնել ջերմոցային տնտեսություններ և կազմակերպել արևային էներգիայի ձեռքբերման աշխատանքներ, որոնք հնարավորություն կստեղծեն համայնքում որոշակիորեն լուծել աշխատատեղերի խնդիրը: Վերջին 3 տարիներին հիմնանորոգվում է նաև քաղաքի հրապարակը, որի աշխատանքներն այս տարի նախատեսվում է ավարտին հասցնել:

Մանվել Կիրակոսյան

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

«ՆՈՐ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԻՔԸ ԽՈՉԸՆԴՈՏ ՉԷ»

Ստեփանավանցի 65-ամյա Թամարա Մատինյանն այն կանանցից է, ով ի տարբերություն շատ հասակակիցների, վաստակած հանգիստը վայելելու փոխարեն, հենց այդ տարիքում է որոշել զբաղվել գործարարությամբ: Համոզված է, նոր գործ սկսելու համար տարիքը խոչընդոտ չի կարող լինել:

«Տարիներ շարունակ վարչական աշխատող եմ եղել, Գյուլագարակի տնտեսությունում կադրերի բաժնի վարիչն էի, հետո արհմիության նախագահ: Քառասուն տարեկան էի, երբ տնտեսությունը լուծարվեց: Կարճ ժամանակ անց փակվեց նաև այն գործարանը, որտեղ ամուսինս էր աշխատում: Երկուսով դարձանք գործազուրկ: Տարիներ շարունակ աշխատանք չէինք կարողանում գտնել: Գիտեք, Հայաստանում 40-50 անց մարդկանց աշխատանքի չեն ընդունում: Գիշերները չէի կարողանում քնել, անընդհատ մտածում էի՝ ինչ անեմ, ինչով զբաղվեմ»,- հիշում է Թ. Մատինյանը:

Մի օր էլ պատահաբար իմացել է, որ Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան կանանց համար ծրագրեր է իրականացնում: Նախ երկմտել է՝ դիմե՞լ, թե՝ ոչ: «Ճիշտն ասած սկզբում մտածում էի, որ այդտեղ երևի երիտասարդ կանայք են պետք: Երբ իմացա, որ տարիքային սահմանափակում չկա, շատ ուրախացա, որոշեցի ես էլ փորձեմ»,- ասում է նա: Մեկ ամիս շարունակ ամեն օր տիկին Թամարան մասնակցել է Տաշիրում անցկացվող դասընթացներին, որոնց ընթացքում ստացել է բիզնես գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ նախնական հմտություններ: Դասընթացներին նրա ակտիվ մասնակցությանը որդին ու ամուսինը լուրջ չեն վերաբերվել: «Բոլորը ծիծաղում էին, տղաս զանգում էր, կատակում, թե՝ մամ, էսօր ի՞նչ ես ստացել»,- ժպտում է Թամարան:

Բարեհաջող ավարտելով դասընթացներն ու ներկայացնելով մրցունակ ծրագիր՝ Թ. Մատինյանը ՀԵԿԱ-ի կողմից ստանում է դրամաշնորհ՝ 2 մլն 215 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ՝ կիսաֆաբրիկատների արտադրություն սկսելու համար: Եվս 20 տոկոսի չափով սեփական ներդրում կատարելով, վերջինս ձեռնամուխ է լինում արտադրության կազմակերպման աշխատանքներին: Տոլմա, կոտլետ, պելմենի, շերտավոր խմոր, դոնդող, ապխտած խոզի միս... Կարճ ժամանակում նորաստեղծ «Համեղ խորտիկի» արտադրատեսակները լայն ճանաչում են ձեռք բերում Ստեփանավանի տարածաշրջանում:

2016 թ.-ին Թ. Մատինյանը, տնտեսական զարգացման բնագավառում ունեցած ներդրման ու ակտիվ գործունեության համար, արժանացել է մրցանակի՝ «Կին գործարարի լավագույն ապրանքանիշ» անվանակարգում: Հաջողության գրավականը նա համարում է տեղական բարձրորակ մսի ու ալյուրի համադրումն ու աշխատանքի նկատմամբ բարեխիղճ մոտեցումը: Առկա արդյունքը, սակայն, տիկին Թամարային չի գոհացնում: Վերջինս ցանկանում է ընդլայնել արտադրանքի տեսականին: Ծավալների ընդլայնման համար, սակայն, լրացուցիչ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ: Թոշակառու գործարարին բանկերը մերժում են վարկ տրամադրել: Ստեփանավանի մի խումբ գործարարների հետ խորհրդակցելով՝ կին գործարարը որոշել է նրանց անունից առաջարկներ ներկայացնել ՀՀ վարչապետին: Առաջարկներից առաջնայինը վերաբերում է հարկային քաղաքականության մեղմացմանը:

«Արտերկրում սկսնակ գործարարին երեք տարի հարկային արտոնություններ են տալիս, ազատում հարկերից, մինչև բիզնեսը ոտքի կանգնի, իսկ մեզ մոտ առաջին օրից հարկվում ենք»,- ասում է նա՝ ընդծելով, որ խրախուսանքի ու աջակցության կարիք ունեն հատկապես կին գործարարները: Վստահ է՝ երկրի տնտեսության հիմքում մանր ու միջին բիզնեսի զարգացումը պետք է լինի: Անհրաժեշտ հոգածություն, սակայն, դեռևս չի նկատում: «Այնքան լավ մտահղացումներով երիտասարդներ ունենք, որոնց այսօր պետության աջակցությունն է անհրաժեշտ»,- ասում է նա ու թվարկում դժվարությունների առաջ կանգնած գործընկերների անունները:

Չնայած խնդիրներին՝ 65-ամյա գործարարը վստահորեն նշում է՝ ինչ գնով էլ լինի, պետք է հասնեմ ամեն ինչի: «Ես հույս չեմ կտրում, դեռ փափագում եմ, որ ամեն ինչ լավ կլինի: Ես սկսել եմ ու պետք է հասնեմ ավելիին: Ծրագրեր շատ ունեմ. արտադրամասի համար նոր տարածքի, առաքման մեքենայի ձեռքբերում, փոքրիկ վաճառակետի ընդլայնում ու նոր սառնարանների տեղադրում... Պետք է ամեն ինչ հասցնեմ: Հետո, երբ տարիքս արդեն մեծ կլինի, արտադրամասս կնվիրեմ թոռներիս, որ շարունակեն գործս»:

Գ. Սարգսյան

ՀԱՐԺԱԶՐՈՒՅՑ

«ԱՌՈՂՋ ԲՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌՈՂՋ ԱՊԱԳԱ»

Civil Voice-ը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2014թ.-ին՝ նպատակ ունենալով նպաստելու էկոլոգիական, սոցիալական և քաղաքացիական հասարակության կայացման հիմնախնդիրների լուծմանը: Կազմակերպությունը կոչված է պահպանելու շրջակա միջավայրը՝ կանխելով մարդկանց, կենդանիների ու բույսերի գոյության համար նախատեսված բնական պաշարների ոչնչացումը: Կազմակերպությունը նպաստում է բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծման գործընթացում հասարակության ակտիվ մասնակցությանը: Առաքելությունն է՝ նպաստել Հայաստանում առավել անվտանգ էկոլոգիական և բարեկեցիկ սոցիալական միջավայրի ձևավորմանը՝ շրջակա միջավայրի պահպանման, հանքարդյունաբերության ոլորտում նորարարական տեխնոլոգիաների ներդրման օրենսդրության ու վարչարարության բարելավման և հանրային իրավագիտակցության բարձրացման ճանապարհով: Կազմակերպության գործունեության և ծրագրերի վերաբերյալ մանրամասներ է ներկայացնում ՀԿ-ի կամավորների համակարգող Արսեն Սահակյանը:

-Բնապահպանական ի՞նչ ծրագրեր են իրականացվել ՀԿ-ի միջոցով:

-Իրականացված ծրագրերը շատ են, կփորձեմ ներկայացնել մի մասը: 2016 թվականի հունվարին, ՀԿ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Ամուլսար» հանքավայրի շահագործման ռիսկերը, դրա վերաբերյալ ՀԿ-ների դիրքորոշումը և հետագա քայլերի մշակումը» խորագրով քննարկումը, որին մասնակցեցին 14 հասարակական կազմակերպություններ, մասնավորապես՝ «Հայկական Բնապահպանական Ճակատ» շարժումը, «Հայկական Բուսաբանական ընկերություն», «Համայնքային քայլ», «Էկոլոգիական ակադեմիա», «Էկոլոգիական հասարակական միություն», «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի», «Հայկական տեխնոլոգիական ակադեմիա», «Շողեր» միություն» հասարակական կազմակերպությունները, «Հանուն Կայուն Մարդկային Զարգացման» ասոցացիան, Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոնը, WWF-Հայաստանը և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և Հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը: Քննարկվեցին Ամուլսարի հանքավայրի շահագործման հետ կապված ռիսկերի գիտական հիմնավորումները, տեղի ունեցավ կարծիքների և առաջարկների փոխանակում: Հանդիպման արդյունքում՝ որոշվեց ստեղծել աշխատանքային խումբ, որը ի մի կբերի հանքավայրի շահագործման ռիսկերի հետ կապված ամբողջ առկա տեղեկատվությունն ու գիտական տվյալները, կպատրաստի մի ընդհանրական փաստաթուղթ, որը քննարկման կդրվի ՀՀ բնապահպանության նախարարության և հանքարդյունաբերողի հետ:

2016 թ.-ին ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Օրհուսի և Էսպո կոնվենցիաների պահանջների արտացոլումը ՀՀ օրենսդրության մեջ» թեմայով քննարկում: Civil voice ՀԿ-ն՝ «Թափոնների ուսումնասիրության կենտրոն», «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն», «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ները միավորելու գրավոր առաջարկություն էր ներկայացրել բնապահպանության նախարարությանը և պատրաստակամություն հայտնել՝ մանրամասն քննարկելու առաջարկվող փոփոխությունների հիմնավորումները: Նախարարության նախաձեռնությամբ քննարկվեցին ներկայացված հիմնավորումները: Այսօր արդեն Կառավարության որոշմամբ միավորվեցին նշված երեք և ևս մեկ ՊՈԱԿ-ները: Մի խումբ հրազդանցիների և տեղի ՀԿ-ների նախաձեռնությամբ, կազմակերպվել էր քննարկում՝ «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների ախտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» թեմայով: Որից հետո խնդիրը քննարկվել է բնապահպանության նախարարությունում:

2016 թ.-ին Գյումրիի ՀԿ-ի գրասենյակում, «Աջակցող ձեռքեր»-ի կամավորները՝ համագործակցելով Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ, նվիրաբերեցին հագուստ և այլ անհրաժեշտ պարագաներ ավելի քան 30 կարիքավոր գյումրեցի ընտանիքների: Միջոցառմանն աջակցեցին նաև Civil Voice ՀԿ Գյումրիի գրասենյակի աշխատակիցներն ու կամավորները: Civil Voice ՀԿ կամավորները մասնակցեցին Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում ծաղկահավաքին, որը տեղի ունեցավ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ: Ծաղկահավաքի նպատակն էր՝ ծաղիկներին «երկրորդ կյանք» հաղորդելու խորհուրդը և բնապահպանական վերամշակման միջոցով՝ կրկին օգտագործելու առաքելությունը:

2015 թվականի դեկտեմբերի 19-ին Civil Voice ՀԿ-ը և «Աջակցենք սահմանամերձ բնակավայրերին» նախաձեռնության կամավորներն այցելեցին Տավուշի մարզի Այգեձոր և Չինար սահմանամերձ համայնքներ՝ նվերներ մատուցելու բոլոր երեխաներին:

Կարևորելով մարզային բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ Civil Voice ՀԿ ներկայացուցիչները՝ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի պատասխանատու Բաբկեն Հարությունյանի գլխավորությամբ, հանդիպում ունեցան Սյունիքի մարզի Կապան քաղաքում գործող ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Հանդիպումը տեղի ունեցավ Կապանի Կանանց Ռեսուրս կենտրոնի գրասենյակում, Civil Voice-ի նախաձեռնությամբ: Ներկայացվեցին կազմակերպության գործունեությունն ու նպատակները, ինչպես նաև հայտարարվեց ֆինանսական աջակցության մասին: Հավելեմ, որ Civil Voice հկ-ն շարունակելու է մարզային և արտերկրյա ՀԿ-ների հետ կապերի հաստատումն ու ամրապնդումը: 2016 թ. ապրիլին Երևանի Էրեբունի վարչական շրջանում տեղի ունեցավ Civil Voice-ի «Մեկ հայ, մեկ ծառ» միջոցառումը: Civil Voice-ի անձնակազմի հետ մեկտեղ, շուրջ 150 երիտասարդ մասնակցեց ծառատունկի աշխատանքներին: Արդյունքում Էրեբունի համայնքում տնկվեց 150 ծառ:

- Ինչպե՞ս է ձևավորվել կամավորների թիմը:

- ՀԿ-ի կազմակերպած միջոցառումներին անընդհատ ավելանում էին մասնակցության ցանկություն հայտնողների թիվը, ուստի կազմակերպության խորհուրդը որոշեց ստեղծել կամավորների թիմ: Վերջիններիս թիմը վերջնական ձևավորվեց 2015 թ. հունիսի 20-ին, 7 անդամից և նշանակվեց համակարգող: Այսօր արդեն թիմն ունի 30 հիմնական անդամ:

- Ո՞ր մարզերն են ընդգրկված ՀԿ-ում կամ համագործակցում են ՀԿ-ի հետ:

- Կազմակերպությունը բացել է գրասենյակ Գյումրի և Կապան քաղաքներում: Նախատեսվում է լուրջ համագործակցություն ծավալող Սյունիքի մարզի հետ: Սիսիանում, Գորիսում, Կապանում, որտեղ կձևավորվեն էկոլոգիական դասարաններ, կանցկացվեն նաև դասընթացներ:

- Ի՞նչը նպաստեց գիրք հրատարակելու գաղափարին:

- Գաղափարը դեռ 2016 թվականից կար. նպատակը՝ մեր երիտասարդ գրողներին աջակցելն ու սատարելն էր և այդ գեղեցիկ օրն էլ ավելի գեղեցկացնելը: Քանի որ ՀԿ-ն սոցիալ-էկոլոգիական է, որոշեցինք այս տարի ստեղծագործությունները լինեն էկո թեմայով, «Առողջ բնություն՝ առողջ ապագա» խորագրով, որի նպատակն էր՝ սերմանել սեր բնության հանդեպ:

- Ի՞նչ սկզբունքով ընտրվեցին գրքում տպագրված ստեղծագործությունները:

- Այս տարի հունվարին Civil Voice հասարակական կազմակերպությունը գիրք նվիրելու օրվա կապակցությամբ հայտարարեց մրցույթ՝ «Առողջ բնություն՝ առողջ ապագա» խորագրով, որին մասնակցեցին երիտասարդները: Մրցույթի արդյունքներ, ամփոփվեցին փետրվարին, որից հետո 12 լավագույն հեղինակների ստեղծագործությունները խմբագրվեցին և տպագրվեցին: Մարտի 1-ին տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը, որի ընթացքում ներկայացվեց գիրքը, մրցույթին և միջոցառմանը առավելագույն ակտիվություն ցուցաբերած մասնակիցներին հանձնվեցին շնորհակալագրեր, իսկ բոլոր ներկաները ստացան գրքեր: Գրքին կարող եք ծանոթանալ Երևանի բոլոր գրադարաններում և ԲՈՒՀ-երի ընթերցարաններում:

Լ. Շահնազարյան

ԴԱՍԸՆԹԱՑ

ՄՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սննդի վերամշակման և անվտանգության խորհրդատու Քլիֆ Վենը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի դահլիճում՝ Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերից ժամանած 5 ՓՄՁ ներկայացուցիչների համար անցկացրել է սննդի վերամշակման, արտադրության անվտանգության միջազգային չափանիշների (HACCP) հատուկ դասընթաց: Ամերիկացի մասնագետի գործնական օրինակների միջոցով, պանրի, չրի և մսամթերքի արտադրությամբ զբաղվող մասնակից ՓՄՁ-ների ներկայացուցիչները ծանոթացան, թե որքան կարևոր է արտադրության մեջ մաքրության և սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումը:

Փորձագետը արտադրողներին է ներկայացրել սննդի անվտանգության միջազգային նորմերը և կանոնները: «Արտասահման արտահանելու համար անհրաժեշտ է պահպանել անվտանգության միջազգային կանոնները: Դուք արտադրում եք մարդկանց համար և պետք է վստահ լինեք, որ ձեր արտադրանքը վնաս չի հասցնի սպառողի առողջությանը»,- նշել է փորձագետը:

Դասընթացին նախորդող 4 օրերին, Քլիֆ Վենն այցելել է մասնակից ձեռնարկությունների արտադրամասեր, որտեղ նաև կատարել է ուսումնասիրություն և տեղում մատուցել գործնական խորհրդատվություն: Դասընթացի ընթացքում Քլիֆ Վենը ներկայացրել է իր դիտարկումները՝ յուրաքանչյուր արտադրողի համար և փոխանցել սննդի անվտանգությանը վերաբերող իր հանձնարարականները:

Դասընթացի մասնակիցների հետ հանդիպել և սննդի անվտանգության ապահովման համար նախատեսված մաքրող և ախտահանող միջոցներն է ներկայացրել նաև Սոֆադ ընկերության ներկայացուցիչը:

Քլիֆ Վենը Հայաստան է ժամանել «Ֆերմերից՝ ֆերմերին» (Farmer-to-Farmer (FtF)) ծրագրի աջակցությամբ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և նրա գործընկեր կազմակերպությունների կողմից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի՝ ոլորտային աջակցության բաղադրիչի շրջանակում: Ծրագրի առաջնահերթություններից մեկն է՝ նպաստել չրերի, պանրի, գինու արտադրության և ջերմոցային տնտեսությունների զարգացմանը Հայաստանում:

www.smednc.am

ԱԳՐՈ Լրատու
Ապրիլ 15-26, 2017 թ.
Թիվ 9 (2130)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍԿՍՆԱԿ ՃԱԳԱՐԱՊԱՀՆԵՐԻՆ

Սկիզբը՝ նախորդ համարում

ԻՆՉՔԱՆ ՋՈՒՐ Է ԽՄՈՒՄ ՃԱԳԱՐԸ

Սիրող ճագարաբույծներից շատերի մոտ արմատացած է այն սխալ կարծիքը, որ ճագարը ջուր քիչ է խմում, իսկ երբ կերակրվում է հյութալի կերերով՝ ընդհանրապես ջրի պահանջ չի ունենում: Ճագարների կյանքում ջուրն ունի կարևոր նշանակություն: Այն մտնում է կենդանու օրգանիզմի բոլոր հյասվածքների կազմի մեջ, մասնակցում մարմնի ջերմակարգավորմանը և ֆիզիոլոգիական գործընթացներում կատարելով՝ կարևոր դեր: Օգտագործվող ջրի քանակը կախված է կենդանու հասակից (մատղաշի ջրի պահանջը, հասակավորի համեմատ, բարձր է), ֆիզիոլոգիական վիճակից (հղիություն, լակտացիա, արտադրողների ակտիվ շրջան) և արտաքին մրջավայրի ջերմաստիճանից (+10° C-ի դեպքում խմում են 20 % պակաս ջուր, քան՝ +21° C): Ճագարների խմելու ջրի քանակի վրա որոշակի ազդում է նաև կերաբաժնում պարունակվող պրոտեինի քանակը. որքան այն բարձր է, այնքան բարձրանում է նաև ջրի պահանջը:

Ճագարը, 1 կգ կենդանի զանգվածի հաշվով, խմում է գրեթե 100 մլ ջուր, այսինքն՝ կրկնակի ավելի: Բնականաբար, պետք է հաշվի առնել նաև, որ եթե կերաբաժնում հյութալի կերերի տեսակարար կշիռը բարձր է, ջրի պահանջը նվազում է (հատիկային՝ 11-15 %, խոտ՝ 14-17 %, հյութալի կեր՝ 80– 90 %): Շատ ջուր են պահանջում հատկապես հղի, նորածին և կերակրող ճագարամայրերը: Ամառային շրջանում ճագարամայրը, իր 7 ձագերի հետ միասին (մինչև 1.5-3 ամսական հասակը), օրական խմում են 3.5 լ ջուր: Հղի մայրերին, արտադրողներին ու վերանորոգման մատղաշին խորհուրդ է տրվում, օրվա ընթացքում տալ 0.3-0.5 լ, կերակրող մայրերին 0.6-0.8 լ, բրոյլեր աճեցնող մայրերին (ճագարների հետ միասին)՝ 3.5–4.0 լ ջուր:

ճագարներին ջրում են ամեն օր՝ առավոտյան և երեկոյան: Անհրաժեշտ է հետևել, որպեսզի ջրամաններում ջուրը լինի անընդհատ: Լիարժեք կերակրման դեպքում, կենդանիները ջրի հիմնական բաժինը խմում են երեկոյան և գիշերը, այսինքն՝ օրվա այն հատվածում, երբ կերամանից օգտվում են ավելի ինտենսիվ: Կարևոր նշանակություն ունի նաև ջրի ջերմաստիճանը: Ճիշտ է, ճագարները ցրտադիմացկուն կենդանիներ են, բայց ձմռան ցուրտ ամիսներին, հատկապես գիշերային ժամերին, մրսում են և կիսասառցակալած ջրամաններից ջուր քիչ են խմում: Ուստի ճագարների բացօթյա պահվածքի դեպքում, ինչպես նաև չկարգավորվող միկրոկլիմա ունեցող փակ տիպի ճագարանոցներում խմելու ջուրն անհրաժեշտ է նախապես տաքացնել (30-40° C): Խորհուրդ չի տրվում ձմռան ամիսներին ջուրը փոխարինել ձյունով, դա կարող է ցրտառության (մրսածության) և աղեստամոքսային ուղու տարբեր հիվանդությունների պատճառ հանդիսանալ: Խմելու ջուրը պետք է լինի թարմ, մաքուր և զերծ օրգանական ու քիմիական միացություններից: ճագարների կենդանի զանգվածի շուրջ 70 %-ը կազմում է ջուրը: Փորձերով հաստատվել է, որ ճագարի օրգանիզմը՝ 10 % ջրազրկվելու դեպքում ունենում է մահացու վախճան: Կերակրման չոր տիպի դեպքում, առանց ջրի, ճագարը կարող է դիմանալ ընդամենը 3 օր: Ջրի պակասի դեպքում կենդանիները կերի նկատմամբ դառնում են քմահաճ ու անտարբեր, ուտում են քիչ, մարսում են դժվար, իսկ արդյունքում կտրուկ ընկնում են օրգանիզմի բնական դիմադրողականությունն ու մթերատվությունը:

Ճագարների մոտ ջրի պակասը կարող է պատճառ դառնալ Կաննիբալիզմի (դրսևորվում է ձագակերությամբ), վիժումների, ստերջության և ամլության (հատկապես՝ շոգ ամիսներին), սեռական ցանկության անկման: Ավելին, ջրի պակասը շատ սուր է անդրադառնում կերակրող ճագարամայրերի կաթնագեղձերի կաթի և մատղաշի աճի վրա: Մեր հետազոտությունների և գրականության մեջ եղած տվյալների համաձայն՝ ճագարների մոտ ջրի պակասը հանգեցնում է փայծաղի մեծացման (արուներ՝ 75 %, էգեր 170 %), լյարդի փոքրացման, երիկամների հիպերտրոֆիայի (գերաճ):

Կենդանիներին ջրելիս՝ օգտագործված ջրի քանակների միջև նկատվում են մեծ տատանումներ, դրա համար (ջրային բալանսը բավարար պահելու համար), ցանկալի է ջրամատակարարումն իրականացնել ավտոխմոցներով:

ճագարների պահվածք՝ *Տիպային պահվածք* *Շեդային պահվածք*

ԱՐՏԱԴՐՈՂ ԱՐՈՒ ՃԱԳԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ ԸՆՏՐԱՍԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ճագարների յուրաքանչյուր հոտ ստեղծելու, բուծելու և հաջողությամբ կատարելագործելու համար հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հատկապես՝ արտադրող արուների ընտրությանը, որոնց նկատմամբ սովորաբար ներկայացվում են ավելի խիստ պահանջներ: Արտադրողից ստացվում է զգալիորեն ավելի շատ սերունդ, քան՝ ճագարամայրից: Լիարժեք օգտագործվող արտադրողը, երեք տարվա ընթացքում, տալիս է 1000 (որպես հայր) և միջին հաշվով 3000 (որպես պապ) ճագարներ, ինչը նպաստում է պոպուլյացիայում տվյալ արտադրողի ցանկալի և ոչ ցանկալի գեների խտացմանը: Ապացուցված է, որ տարբեր արտադրողներ իրենց անհատական հատկանիշները միատեսակ չեն փոխանցում սերնդին: Կան արտադրողներ, որոնք այն փոխանցում են բավականաչափ կայուն կերպով և հակառակը: Արուներն ունեն մեծ տոհմային արժեք, քանի որ դրանք իրենց խառնվածքային և ժառանգական հատկանիշները կայուն կերպով փոխանցում են սերունդներին: Երիտասարդ արու ճագարների սեռական վարքի առաջին նշանները դրսևորվում են 60– 70 օրական հասակում: Վաղահաս ցեղերը սեռահասուն են դառնում 3-4, իսկ ուշահաս ցեղերը՝ 4-5 ամսական հասակում:

Ֆիզիոլոգիապես սեռահասուն արուներին հարկավոր է առանձնացնել ընդհանուր խմբերից և պահել առանձին վանդակներում: Վերջինս ցանկալի է իրականացնել նախօրոք բտվող խմբերը համալրելուց առաջ: Արուների տոհմային օգտագործումը հարկավոր է սկսել վաղահաս ցեղերի մոտ՝ 5–6, իսկ ուշահաս ցեղերի մոտ՝ 8–9 ամսական հասակում: Արտադրությունում արուի տարիքը և սեռահասունությունը բացահայտելու համար հարքով ֆիքսել (ամուր սեղմել թիակների մորթամաշկի ծալքերը), աջ ձեռքի ցուցամատի և միջնամատի օգնությամբ պոչի հիմքը ձգել հետ, այնուհետև բթամատով զգուշությամբ հեռացնել արտաքին սեռական օրգանը հարող մազամաշկը: Երիտասարդ արուի մոտ սեռական օրգանը հիշեցնում է կարճ, կլորանցք խողովակ, հասակավորների մոտ՝ նման է սրված մատիտի:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել սեռականապես ակտիվ արտադրողի ընտրությանը: Ինտենսիվ արտադրության պայմաններում պասիվ արուի օգտագործումը ժամանակի անտեղի կորուստ է նշանակում: Լավագույն արուն պետք է լինի առողջ ու ակտիվ, առանց մարմնակազմության արատների և ունենա ցայտուն արտահայտված երկրորդական սեռական հատկանիշներ: Արու արտադրող ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել սեռական օրգանների զարգացվածությունը: Լավ արուն պետք է ունենա երկու լավ զարգացած, ամուր և էլաստիկ ամորձիներ: Փոքր, փափուկ, մեկ կամ կախ ընկած ամորձիներով արուները հոտի լավացման համար պիտանի չեն և պետք է պարտադիր խոտանվեն:

Աղյուսակում ներկայացնում ենք ճագարների արտադրող արուների գնահատման բալային սանդղակը, որը զգալի չափով կօգնի պրակտիկ աշխատողին՝ բարձրարժեք արտադրող ընտրելու հարցում: Խոտանվում են այն արուները, որոնք ստանում են 1-3 բալ: Գնահատման մեթոդի հիմքում դրված է ոչ թե ծածկի տևողությունը, այլ առաջին և երկրորդ ծածկի միջև ընկած տևողությունն ու շնչառության հաճախականության վիճակը: Ելնելով սեփական դիտարկումներից և փորձից՝ կարծում ենք, որ այս ցուցանիշներն ավելի պարզորոշ են բացահայտում լավ արուի արտակազմվածքային ամրությունը, ակտիվությունն ու սեռական կատարելությունը: Մտահոգիչ է այն, որ ճագարաբույծներից շատերն արտադրողի որակի, օգտագործման ռեժիմի, կերակրման և պահվածքի պայմանների հարցերում, երբեմն, ճիշտ չեն կողմնորոշվում: Վատ աշխատող արուների պատճառով, կորած ժամանակը վերականգնելու համար, երիտասարդ ակտիվ արտադրողներին օգտագործում են գերծանրաբեռնվածությամբ, ինչը, բնականաբար, բերում է լավագույն արուի սերմնահեղուկի քանակի նվազմանն ու որակի վատացմանը: Առաջին հայացքից թվում է, վտանգավոր ոչինչ չկա, միջին տարիքի արուի մեկ ամբողջ էակուլյատը (մանր և խոշոր ցեղերի արուներն արտադրում են համապատասխանաբար՝ 0.2-0.5 և 0.5-2.5 մլ սերմնահեղուկ) պարունակում է գրեթե 50 մլն սերմնաբջիջ, իսկ նորմալ բեղմնավորման համար անհրաժեշտ է ընդամենը 7-12 հատ: Մինչդեռ, հաստատված է, որ բեղմնավորման բնականոն ընթացքի համար անհրաժեշտ է, որ էակուլյատում սերմնաբջիջների թիվը, միջին հաշվով, լինի 50 մլն-ից ոչ պակաս: Արտադրողներր մոտ սեռական բջիջներ գոյանում են ամբողջ տարին, սակայն հարկավոր է հիշել, որ աշնանն ու վաղ ձմռանը, դրանց մոտ սերմնաբջիջների քանակը և կենսունակությունը զգալիորեն նվազում են, որը պայմանավորված է սեզոնային ակտիվ մազափոխությամբ: Ինտենսիվ զուգավորման շրջանում արտադրողին թույլատրվում է օրական երկու ծածկից ոչ ավելի, և յուրաքանչյուր 4-5 օրը մեկ պարտադիր պետք է տալ մեկ օր հանգիստ: Ամռանը արտադրողին ցանկալի է օգտագործել օրվա զով ժամերին՝ առավոտյան և երեկոյան, իսկ ձմռանը նպատակահարմար է զուգավորումը սկսել կեսօրից հետո՝ օրվա համեմատաբար տաք ժամերին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել արտադրող արուների լիարժեք կերակրմանը և ընդհանուր վիճակին, հանգստի և հատկապես զուգավորման շրջանում: Միջինից ցածր սնվածություն ունեցող, վատ կերակրված ու խնամված արտադրողը կարող է տալ թույլ կենսունակությամբ սերունդ: Իսկ նորմայից գեր, ճարպակալած արտադրողից հարկավոր է խուսափել:

Ճագարների հոտը համալրելիս, նախատեսվում է արտադրողների համապատասխան զույգընտրություն՝ հոտի ճագարամայրերի գլխաքանակի չափով: Հիմնական հոտում՝ 1:10 պոլիգամիայի գործակցի դեպքում, արտադրողների գլխաքանակը նշանակալից է՝ մոտ 15 տոկոս: Արտադրողների քանակի նվազեցումը հնարավորություն կընձեռնի ավելացնել ճագարամայրերի գլխաքանակը՝ առանց լրացուցիչ ծախսերի: Դրան կարելի է հասնել միայն ոչ հեռանկարային արուների խոտանման և բարձրարժեք արտադրողների գլխաքանակի ավելացման շնորհիվ:

N	Սեռական կարգի բնութագիր	Բալեր
1	Էգի նկատմամբ վախ կամ հետաքրքրասիրության բացակայություն	1
2	Հետաքրքրասիրություն, երկարատև հոտոտում, սակայն նպատակադրված ցատկերի և ծածկի բացակայություն	2
3	Համեմատաբար արագ, սակայն թույլ ծածկ, զուգավորելուց հետո էգի նկատմամբ հետաքրքրության բացակայություն: Շնչառության հաճախականության արագացում:	3
4	Արագ ծածկից հետո համառ, կենտրոնացված ուշադրություն էգի նկատմամբ: Կրկնակի ծածկի փորձ՝ 2-3 րոպեից ոչ շուտ: Սիրահետման շրջանում և ծածկից հետո նորմալ շնչառություն: Կրկնակի ծածկերի միջև ընդմիջում՝ ոչ ավելի քան 5 րոպե 30 վրկ տևողությամբ:	4
5	Վարկենական, առանց նախապատրաստվելու /ագրեսիվ ծածկ/, սիրահետում, կրկնակի ծածկերի միջև ընդմիջում՝ 2-3 րոպեից ոչ ավելի, շնչառությունը՝ կանոնավոր:	5
6	Առաջին ծածկից հետո՝ անմիջապես, կրկնակի խորը ծածկ: Շնչառությունը՝ կանոնավոր:	6

Ռոբերտ Վարդանյան
Ավագ գիտաշխատող, սելեկցիոներ

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՇԽԱՐՀ

ԱՎՈԿԱԴՈ. ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Ավոկադոն մշտադալար պտղատու բույսի տեսակ է, որը պատկանում է Lauraceae ընտանիքին: Ավոկադոյի պտուղները հարուստ են վիտամիններով և կարևոր հանքային նյութերով: Ռուսերենում օգտագործում են բույսի մեկ այլ անվանում՝ ագակատ: Իսկ անգլերենում բույսն ու պտուղներն ունեն հետևյալ անունը՝ alligator pear («կոկորդիլոս տանձ»):

Ավոկադոն արագ աճող ծառ է, որի բարձրությունը հասնում է մոտավորապես 18 մետրի, ցողունը սովորաբար լինում է ուղիղ՝ խիստ ճյուղավորված: Տերևներն էլիպսաձև են, երկարությունը՝ մինչև 35 սմ: Ծաղիկները փոքր են աչքի չընկնող, կանաչավուն են: Պտուղները տարբեր չափի են, տանձի նման, պտղի երկարությունը հասնում է 5 - 20 սմ, քաշը՝ 50 գ մինչև 1,8 կգ: Չհասունացած պտուղը մուգ կանաչ է, կեղևը՝ կոշտ, ժամանակի ընթացքում դառնում է սև: Հասած պտուղն ունի կանաչ կամ դեղնականաչ գույն, պարունակում է շատ ճարպ: Պտղի կենտրոնում գտնվում է մեծ կորիզը կամ սերմը: Համաձայն հնագիտական տվյալների՝ ավոկադոն աճեցնում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակից: Ավոկադոն աճեցնում են բազմաթիվ արևադարձային և մերձարևադարձային երկրներում: Մեկ ծառից հավաքում են մոտավորապես 150-200 կգ բերք: Գոյություն ունեն ավոկադոյի 400 սորտեր: Եվրոպայում ավոկադո կարող են ձեռք բերել ամբողջ տարվա ընթացքում: Հայրենիքը՝ Մեքսիկան և Կենտրոնական Ամերիկան է:

Առաջին անգամ համտեսելով ավոկադոն՝ սկզբից չես զգում՝ մի՞րգ է, թե՞ բանջարեղեն: Բայց վստահորեն կարելի է ասել, որ ավոկադոն ոչ սովորական պտուղ է: Քիմիական բաղադրությամբ այն բանջարեղեն է, բայց աճում է ծառի վրա՝ որպես միրգ: Երկար ժամանակ նույնիսկ ընկույզ էին անվանում: Ավոկադոն չնայած սենյակային բույս չէ, բայց հեշտությամբ կարելի է աճեցնել կորիզով: Մի քանի տարվա ընթացքում բարձրությունը կարող է հասնել 1 մետրի: Բնության մեջ ավոկադոյի ծաղիկը բացվում է երկու անգամ, հաջորդաբար կատարելով՝ մեկ՝ իգական, մեկ՝ արական ֆունկցիա: Ավոկադոն ունի նաև «յուղային տանձ» անվանումը, որը կապված է պտղամսի կազմվածքային փափկության հետ: Մյուս անվանումն առաջացել է ացտեկական «ahuacutl» բառից, որը նման է իսպաներեն ալիգատոր բառին և ստացել է «կոկորդիլոսի տանձ» անվանումը:

Ըստ հնագույն ացտեկական ավանդազրույցի՝ ավոկադոյի կորիզը հնդիկներին նվիրել է Աստված՝ նրանց խոստանալով մշտապես փրկել քաղցից: Կորիզից աճում է մեծ բարձրության հասնող մշտադալար ծառ, որի բերքառատ ճյուղերը ծանրությունից թեքվում են ցած: Ացտեկները համտեսելով այդ աստվածային ընծան՝փրկվում են սովից: Ավոկադոյի պտղամիսը պարունակում է գեղեցկության և առողջության համար կարեւոր (A, C, E, PP, B_1, B_6, B_9, K, D) վիտամիններ և վիտամինային խմբեր, հանքային նյութեր (կալիում, կալցիում, մագնիում, ֆոսֆոր, երկաթ, պղինձ, մարգանեց), մոտ 30 % ճարպեր: Ավոկադոյի պտուղների մեջ պարունակվող ֆոլաթթուն արյան մեջ նվազեցնում է խոլեստերինի մակարդակը: Այն կիրառվում է որպես կանխարգելիչ միջոց՝ սակավարյունության, աղեստամոքսային համակարգի հիվանդությունների, ստամոքսաբորբի, հիպերտոնիկ հիվանդության, աթերոսկլերոզի, շաքարային դիաբետի դեպքում: Բարելավում է տեսողությունը, հիշողությունը և կրճատում սիրտ-անոթային հիվանդությունների զարգացումը: Վերացնում է նաև սթրեսները: Ավոկադոյի կեղևը երբեմն օգտագործում են արյունալույծ հիվանդության (դիզենտերիա) ժամանակ: Նրա մեջ գերակշռող վիտամին E-ն օրգանիզմը հարստացնում է թթվածնով՝ պաշտպանելով օրգանիզմի և մաշկի բջիջները, F-ը՝ ապահովում է մազերի և մաշկի առողջ վիճակը: Պղինձը կանխում է անեմիան՝ սակավարյունությունը, երկաթը արյունաստեղծ կարևոր էլեմենտ է, վիտամին B_2-ը մասնակցում է արյան կարմիր գնդիկների առաջացմանը: Որպես կալիումի աղբյուր՝ կարգավորում է արյան ճնշումը: Ավելի շատ կալիում է պարունակում, քան՝ բանանը: Ավոկադոն մարմնի և օրգանիզմի երիտասարդության և առողջության աննկարագրելի աղբյուր է: Շատերը հնարավորություն չունեն այդ պտղի տերևներն օգտագործելու, բայց ավոկադոյի հայրենիքում այն օգտագործում են տարբեր հիվանդությունների բուժման համար: Ավոկադոն իր կալորիականությամբ գերազանցում է ձվին ու մսին:

Ավոկադոյի պտուղը համտեսելիս՝ բարձրանում է տրամադրությունը, հիվանդությունից հյուծված օրգանիզմին օգնում է վերականգնել կենսական ուժերը: Պետք է հիշել, որ կտրատած ավոկադոյի պտղամսի վրա պետք է կիտրոնաթթու լցնել, քանի որ պտուղը կտրատելուց հետո մգանում է և ոչ ախորժաբեր տեսք է ստանում: Որպես սնունդ՝ օգտագործվում է միայն պտղամիսը: Հիպերտոնիայի բուժման համար՝ ավոկադոյի պտղամսին ավելացնել բանջարեղենային հյութեր՝ լոլիկի, գազարի կամ բազուկի 1:2 հարաբերությամբ. օգնում է զարկերակային ճնշման նվազեցմանը: Ավոկադոն հակացուցված է գերզգայուն անձանց. այն կարող է ալերգիկ հակազդում առաջացնել, բացի այդ՝ այն ունի գիրացնող հատկություն: Առհասարակ, ավոկադոն լայնորեն օգտագործվում է կոսմետոլոգիայի արտադրության մեջ: Մեքսիկացի կանայք ավոկադոյի յուղն անվանում են «գեղեցկության յուղ»: Տնային պայմաններում կարելի է ոչ միայն դեմքի և մազերի, մարմնի մաշկի համար նախատեսված դիմակներ, այլև սնուցող քսուքներ պատրաստել:

Պետք է օգտագործել լավ հասած պտուղները: Հատկապես դեմքի և մարմնի չոր մաշկ ունեցողների, կամ արեւից և ցրտից վնասված մաշկի համար են նախատեսված ավոկադոյով դիմակները: Ավոկադոն նպաստում է մաշկի բջիջների մեջ կոլլագենի վերարտադրությանը, որով պայմանավորված է մաշկի էլաստիկությունը:

Լիլիթ Գասպարյան

ԲՈՒՅՍԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ԱՄՐԱՊՆԴԵԼ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ բույսեր կարող են օգնել ամրապնդել դիմադրողականությունն ու լավացնել ինքնազգացողությունը, եթե, իհարկե, հակացուցումներ չկան: Սկորև ներկայացված են բույսեր, որոնք օգտակար են իմունային համակարգի համար:

ՄԱՂԱԴԱՆՈՍ

Մաղադանոսը շատերն օգտագործում են սննդի մեջ և տեղյակ չեն, թե որքան առողջարար է այն աչքերի համար: Մաղադանոսը պարունակում է՝ վիտամիններ A, K, C, E, B_6, B_{12}, կալցիում, կալիում, ցինկ: Մաղադանոսը պարունակում է նաև հանքանյութեր և հակաօքսիդանտներ, որոնք օգնում են ամրացնել օրգանիզմի դիմադրողականությունը: Վիտամին A-ն օգնում է պաշտպանել աչքը՝ այն թաց պահելով: Երբ վիտամին A-ն միանում է այլ հակաօքսիդանտների հետ, կարող է կանխարգելել տարիքի հետ մակուլյար դեգեներացիայի զարգացումը: Բետակարոտին պարունակող մթերքը, ինչպիսիք են գազարն ու սպանախը, առավել օգտակար է, երբ օգտագործվում է մաղադանոսի հետ: Մաղադանոսի պարունակության մեջ մտնող այլ նյութեր օգտակար են աչքերի վնասվածքների դեպքում, որոնք առաջանում են էկոլոգիական աղբյուրներից, ինչպես, օրինակ՝ ուլտրամանուշակագույն ճառագայթներից:

Այդ նյութերը նվազեցնում են կատարակտի զարգացման հավանականությունը, ինչպես նաև կանգնեցնում կենսաբանական գործընթացները, որոնք վնասում են ցանցաթաղանթը: Մաղադանոսը նաև միզամուղ հատկություն ունի, ինչն օգնում է վերահսկել այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են միզուղիների վարակները, երիկամներում և լեղապարկում քարերի առկայությունը:

Մաղադանոսն ունի հակաբորբոքային հատկություններ, ինչը բուժում է ատամնացավը, միջատների խայթոցները և այլ բորբոքային երևույթներ: Մաղադանոսը կարող է կանխարգելել նաև ուռուցքների առաջացումը: Այն առողջ է պահում սիրտը, օգնում է ունենալ առողջ և ամուր ոսկրեր, կարող է նաև օգտագործվել արյան մեջ շաքարի մակարդակը վերահսկելու համար: Մաղադանոսը թարմ վիճակում առավել օգտակար է, քան չորացրած վիճակում: Այն պետք է մուգ կանաչ գույն ունենա և թարմ լինի: Խուսափեք այն մաղադանոսից, որը թառամած է կամ տերևները դեղնած են:

ԿԻՏՐՈՆԱԽՈՏ

Կիտրոնախոտից պատրաստված մեկ բաժակ տաք թեյը կօգնի օրգանիզմին պայքարել վարակների դեմ ու ամրապնդել դիմադրողականությունը: Կիտրոնախոտի մեջ կան եթերային յուղեր, որոնք ոչ միայն հակաօքսիդանտային հատկություն ունեն, այլև բարելավում են նեյտրոֆիլների, լիմֆոցիտների ու իմունային բջիջների մակարդակը, նաև նպաստում էրիթրոցիտների գոյացման գործընթացին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:

ՇԱԲՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
- Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- «Հայփոստ»,
- «Հայմամուլ»,
- «Պրես-Սառուցիչ»

կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 30
ստորագրված է տպագրության 25.04.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա